ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

22.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/28

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.02.2018թ. թիվ 04/26-3/2983-18 գրությամբ Ա/Ձ Մանվել Ջալավյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության զորքերի 16.02.2018թ. թիվ 01.2/01.2/2569-18 գրության հիման վրա, 20.02.2018թ. թիվ 04/26-3/2983-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Մանվել Ջալավյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Մանվել Ջալավյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Մանվել Ջալավյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.02.2018թ. առարկությամբ հայտնել է, որ հիմքեր առկա չեն Մասնակցին Ցուցակում ներառելու համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ոստիկանության զորքերի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տպիչ սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 01.02.2018թ. հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Մանվել Ջալավյանը:

Մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով առաջարկել է պայմանագիրը կատարել՝ երկու չափաբաժնի համար 3900 ՀՀ դրամ միավորի գնով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.02.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) կողմից 09.02.2018թ. տրված եզրակացությունը, որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կոմիտեի եզրակացության համաձայն՝ Մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները կազմել են 1832 ՀՀ դրամ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մասնակիցը 14.02.2018թ. դիմել է Կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 01.02.2018թ. (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) Մասնակցի կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոգրյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից Ա/Ձ

Մանվել Ջալավյանին 14.02.2018թ. տրվել է թիվ 1779 տեղեկանքը, համաձայն որի՝ Ա/Ձ Մանվել Ջալավյանը 01.02.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Մասնակիցը 15.02.2018թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է վերոնշյալ տեղեկատվությունը՝ կից ներկայացնելով 14.02.2018թ. դիմումի և Կոմիտեի կողմից 14.02.2018թ. տրված 1779 տեղեկանքի պատճենները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով՝ Ա/Ձ Մանվել Ջալավյանը գտնում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (01.02.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել ժամկետանց պարտավորություններ:

Բացի այդ, Մասնակիցը մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամկետանց պարտավորությունների

բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը՝ Կոմիտեի կողմից 14.02.2018թ. տրված թիվ 1779 տեղեկանքը, ներկայացրել է Պատվիրատուին:

Մասնակիցը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.02.2018թ. թիվ 04/26-3/2983-18 գրությամբ ներկայացված Ա/Ձ Մանվել Ջալավյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել՝ Մասնակցին չներառել ցուցակում:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/28 ընթացակարգի շրջանակներում 27.02.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանության զորքերը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.02.2018թ. թիվ 01.2/01/2/2569-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ոստիկանության զորքերի կողմից 25.01.2017թ. «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով հայտարարված մրցույթում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության մասին 05.02.2018թ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարվել է հարցում: Նույն որոշման 48-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից 09.02.2018թ. ստացված եզրակացության արդյունքում պարզվել է, որ Ա/Ձ Մանվել Ջալավյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ

ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ: Սակայն Մասնակիցը 15.02.2018թ. N 1 գրությամբ պատվիրատուին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից իրեն տրամադրված տեղեկանքը, որի համաձայն 01.02.2018թ. դրությամբ ժամկետանց պարտավորություններ առկա չեն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/28 ընթացակարգի շրջանակներում 27.02.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/28 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/28 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար տպիչ սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 01.02.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Մանվել Ջալավյանը:

2. Մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը ***1-ին չափաբաժնի մասով կազմել է 1900 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 3000 ՀՀ դրամ:***

3. Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 09.02.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Մանվել Ջալավյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1832 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Մանվել Ջալավյանի հայտը մերժվել է:

6. Մասնակիցը 15.02.2018թ. «ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման հանձնաժողովին է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից 14.02.2018թ. տրված N 1779 տեղեկանքը, համաձայն որի Ա/Ձ Մանվել Ջալավյանը 01.02.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

7. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 02.05.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/7864-18 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե Ա/Ձ Մանվել Ջալավյանը 01.02.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

8. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 18.05.2018թ. թիվ 1/6-1/25816-18 գրությամբ հայտնել է, որ Ա/Ձ Մանվել Ջալավյանը 01.02.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.02.2018թ. թիվ 04/26-3/2983-18 գրությունը, ՀՀ ոստիկանության զորքերի 16.02.2018թ. թիվ 01.2/01.2/2569-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.05.2018թ. թիվ 1/6-1/25816-18 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման

խրոհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար տպիչ սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 01.02.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Մանվել Ջալավյանը:

Մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը ***1-ին չափաբաժնի մասով կազմել է 1900 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 3000 ՀՀ դրամ:***

Միևնույն ժամանակ Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Մանվել Ջալավյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 05.02.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ա/Ձ Մանվել Ջալավյանի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 09.02.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Մանվել Ջալավյանը հայտը ներկայացնելու օրվա՝ 01.02.2018թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1832 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Մանվել Ջալավյանի հայտը մերժվել է:

Մասնակիցը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից 14.02.2018թ. տրված N 1779 տեղեկանքը, ***համաձայն որի՝ 01.02.2018թ. դրությամբ Ա/Ձ Մանվել Ջալավյանը չի ունեցել ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:***

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 02.05.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/7864-18 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե Ա/Ձ Մանվել Ջալավյանը 01.02.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

Ի պատասխան վերոհիշյալ գրությանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 18.05.2018թ. թիվ 1/6-1/25816-18 գրությամբ հայտնել է, որ ***Ա/Ձ Մանվել Ջալավյանը 01.02.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:***

Դրա հետ մեկտեղ Կարգի 45-րդ կետը սահմանում է, որ կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված ***փվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:***

«ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը, համաձայն «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության, տեղի է ունեցել 14.02.2018թ. ժամը 15:00-ին: Միևնույն ժամանակ՝ 14.02.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայատարարությունը:

Ա/Ձ Մանվել Ջալավյանը 15.02.2018թ.՝ մինչև «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, գնահատող հանձնաժողովին ներկայացրել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից 14.02.2018թ. տրված N 1779 տեղեկանքը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Մանվել Ջալավյանը «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացնելու օրվա դրությամբ (01.02.2018թ.), համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից 14.02.2018թ. տրված N 1779 տեղեկանքի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.05.2018թ. թիվ 1/6-1/25816-18 գրության, չի ունեցել ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ: Միևնույն ժամանակ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովին ներկայացվել է Կոմիտեի կողմից տրամադրված լրացուցիչ տեղեկատվություն, ուստի Կարգի նույն կետի համաձայն՝ Ա/Ձ Մանվել Ջալավյանի տվյալները չպետք է ներկայացվեին լիազոր մարմնին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.05.2018թ. թիվ 1/6-1/25816-18 գրությունը, գտնում եմ, որ Ա/Ձ Մանվել Ջալավյանը ՀՀ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-18/9/Բ/1/ԿԾ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.02.2018թ. թիվ 04/26-3/2983-18 գրությամբ Ա/Ձ Մանվել Ջալավյանին (ՀՎՀՀ՝ 82934656) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**